ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 19 » մայիս 2026թ. No 2829 - Ա

ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԷԳԻՍ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՓԲԸ, 1165 ԲՈՒԴԱՊԵՇՏ, ԲՈԿԵՆԻՖՈԼԴԻ Փ. 118-120 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ,ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԷԳԻՍ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՓԲԸ, 1106 ԲՈՒԴԱՊԵՇՏ ԿԵՐԵՍՏՈՒՐԻ Փ.30-38, ՀՈՒՆԳԱՐԻԱ «ՍՈՒՊՐԱՍՏԻՆԵԿՍ ԼԵՎՈՑԵՏԻՐԻԶԻՆ (ԼԵՎՈՑԵՏԻՐԻԶԻՆԻ ԴԻՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 5ՄԳ; (7/1X7/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ, (14/2X7/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ, (10/1X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ, (20/2X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ, (30/3X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ հետգրանցումային փոփոխությունների իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված Հունգարիայի Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120 արտադրության,դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ.30-38 Հունգարիա «Սուպրաստինեկս լևոցետիրիզին (լևոցետիրիզինի դիհիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 5մգ; (7/1x7/) բլիստերում, (14/2x7/) բլիստերում, (10/1x10/) բլիստերում, (20/2x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ ԼՊ-N-001304-ԳՊ-ԱՄ առ 29.04.2026թ. բացասական եզրակացության համաձայն՝ հայտը ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով ռեֆերենտ երկրի կողմից տրված բացասական եզրակացությունը (իրավական հիմք՝ 11.09.2025 №25-6-4337865/Изм/ЗД/ЭД):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետի՝ դեղի հետգրանցումային փոփոխություններն մերժելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 58-րդ կետը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հունգարիայի Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120 արտադրության,դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ.30-38 Հունգարիա «Սուպրաստինեկս լևոցետիրիզին (լևոցետիրիզինի դիհիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 5մգ; (7/1x7/) բլիստերում, (14/2x7/) բլիստերում, (10/1x10/) բլիստերում, (20/2x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում» դեղի հետգրանցումային փոփոխությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Recoverable Signature

X

Signed by: GASPARYAN ARMEN 2408830443